

Ավագ դպրոց

Գծանկար

Գծանկարչությունն առարկայի նպատակն է՝ ավագ դպրոցում, 10-12-րդ դասարաններում ուսուցողական առաջադրանքների միջոցով գործնականում յուրացնել կերպարվեստում կարեւոր համարվող այնպիսի հիմնարար գիտելիքներ, ինչպիսիք են հեռանկարը, հարթության վրա ծավալի գծակոնստրուկտիվ կառուցումը, ըստ առարկայի կառուցվածքի նրա ծավալի վրա լուսաստվերի բաշխվածության օրենքները: Պրակտիկ գործունեության ընթացքում ձեռք բերել կատարողական վարպետության որակներ:

Գծանկարչության արվեստանոցը լուսավոր է եւ կահավորված անհրաժեշտ մասնագիտական գույքով (նկարակալներ, տախտակներ, աթոռներ) գիպսե զանազան երկրաչափական մարմիններով, օճանմենտներով եւ արձաններով, նատյուրմորտների համար անհրաժեշտ տարատեսակ կենցաղային եւ այլ առարկաներով ու տարբեր տոնայնության դրապիրովկաներով, ինչպես նաեւ ինտերնետին միացած համակարգչով, մասնագիտական գրքերով, տեսանյութերով եւ ֆիլմերով:

Դասերը կազմակերպելու ընթացքում ուսուցիչը ըստ անհրաժեշտության կիրառում է իր պատրաստած, կամ գրքերից ու համացանցից վերցրած դիդակտիկ նյութեր, որոնք օժանդակ նշանակություն ունեն դասերը կազմակերպելու համար: Սովորողները դասերին հաճախում են գծանկարչության համար անհրաժեշտ նյութերով ու գործիքներով (թուղթ, մատիտներ, ռետին, գոճգամներ եւ այլն), ինչպես նաեւ իրենց հետ ունենում են նկարչական թղթապանակներ, տնային աշխատանքների եւ ճեպանկարի թղթերի համար:

Գծանկարչությունն առարկայի ուսուցման ընթացքը համակարգվում է ըստ Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի գեղ. ավագ դպրոցում նկարչությունն սովորելու համար նախատեսված ժամանակահատվածի և իրականացվում է հաշվի առնելով ուսանողների պատրաստվածության մակարդակների տարբերությունը, ֆիզիկական և առողջական խնդիրները, պահպանելով նախապատրաստական պարզ դասընթացներից դեպի բարդ ու խորացված ուսուցման անցնելու փուլերը:

Դասարաններում սովորում են տարբեր պատրաստվածություն, գիտելիքների տարբեր մակարդակ ու նախասիրություն ունեցող աշակերտներ, որոնք իրենց հետագա ուսուցումը կապում են տարբեր ԲՈՒՀ-երի հետ: Ըստ այդմ ուսուցման ընթացքը պահանջում է թե անհատական եւ թե ընդհանուր մոտեցում: Ընդհանուր մոտեցման հիմքում ընկած է գծանկարչությանը վերաբերվող հիմնարար գիտելիքները, գծանկարչության համար անհրաժեշտ կամ առաջնային նյութերով (գրաֆիտային մատիտներ, ածուխ, սեպիա, ռետին եւ այլն) աշխատելու կարողությունը, որոնք փորձարկվում են ինչպես առանձին վարժությունների, այնպես էլ բնօրինակից առաջադրանքներ կատարելու ժամանակ:

**«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր
Ստեղծողի մոբիլ դպրոց. անհատի կրթական պատվեր**

Տեսական եւ տեխնիկական բաժինների որոշ թեմաներ փորձարկվում են առանձին վարժություններում:

Բնօրինակից նկարելու համար բավարար չէ առարկայի մասին ունեցած ընդհանուր տպավորությունը: Անհրաժեշտ է նկարչական գրագիտության կանոնների և օրենքների իմացություն ու դրանց գործնական կիրառում: Բազմապլան առաջադրանքները տարածական խնդիրներ լուծելու համար պարտադիր պայմաններ են հանդիսանում: Տարատեսակ առաջադրանքներ կատարելիս սովորողները բացի վերլուծական-հետազոտական խնդիրներից, հմտանում են նաեւ գծանկարչական հնարքներում, տիրապետում տարբեր նյութերով աշխատելու եղանակներին: Սովորողներն այցելում են ցուցահանդեսներ եւ թանգարաններ որպես ուսումնասիտազոտական եւ կրթական նշանակության միջավայրեր:

Սովորողներին ներկայացվում են հետեւյալ պահանջները՝

1. Նվազագույն,-

առարկայի ծավալի կառուցման սկզբունքների յուրացում, տոնի միջոցով տարածական եւ պլանային խնդիրների լուծում:

2. Միջին պահանջներ, որը ներառում է նաեւ նվազագույնը,-

Տեսողական վերլուծության եւ կատարողական հնարքների միջոցով տարատեսակ առարկաների նյութականության եւ ֆակտուրայի ստացում, նկարչական տեխնիկական մեթոդներից անցում դեպի նուրբ նկարչական խնդիրների լուծման:

3. Առավելագույն պահանջները՝

Հիմնվելով նախորդ երկու պահանջների վրա, պլաստիկ անատոմիայի իմացություն, գիպսից եւ բնորդից գլուխներ նկարելու համար:

Արվեստանոցում ձեռք բերված գիտելիքները աշակերտներն ամրապնդում են տանը նույն բովանդակությամբ աշխատանքների միջոցով, անհատական ինքնուրույն աշխատանք կատարելու պարտադիր բաղկացուցիչներից են նաեւ ճեպանկարները եվ վարպետների ստեղծագործություններից պատճենելը:

Առաջադիմող աշակերտները մասնակցում են ինչպես ներկրթական, այնպես էլ հանրապետական կամ միջազգային զանազան ցուցահանդեսների եւ նախագծերի: Բոլոր աշխատանքները թվայնացվում եւ տեղադրվում են համացանցում գտնվող անհատական թղթապանակների մեջ, առավել ամփոփիչ եւ ներկայացուցչական դարձնելով կատարված աշխատանքը:

**«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր
Ստեղծողի մոբիլ դպրոց. անհատի կրթական պատվեր**

| Բովանդակություն | Ուսման փուլեր | | |
|--|-------------------------|----|-----|
| Տեսություն | Հիմնական կրթական հենքով | | |
| | I | II | III |
| 1. Գծային հեռանկարի հիմնական դրույթները | | | |
| ա) գիծ եւ հարթություն | | | |
| բ) պարզ ծավալային ձևերը հեռանկարում | + | | |
| գ) տեսողական ընկալումը եւ առարկաների պատկերումը բնօրինակից | + | | |
| դ) առարկայի ծավալի կառուցման սկզբունքը | + | | |
| ե) բնօրինակի եւ պատկերի պրոպորցիոնալ փոխհարաբերությունները | + | | |
| 2. Պատկերացում լուսաստվերի մասին | | | |
| ա) տոնը որպես ծավալային ձևերի արտահայտման միջոց | + | | |
| բ) տոնային գրադացիա | + | | |
| գ) տոնի միջոցով տարածական եւ պլանային խնդիրների լուծում | + | + | |
| 3. Բնօրինակից նկարելիս կառուցման կոմպոզիցիոն հիմքերը եւ աշխատանքային մեթոդները | | + | |
| | | + | |
| ա) թեմատիկա | | | + |
| բ) սյուժե | | | + |
| գ) կոմպոզիցիոն կենտրոն | + | | + |
| դ) ոճի | + | | |
| ե) հարթություն, տարածություն 150 | + | | |
| զ) դիտակետ | + | | |

**«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր
Ստեղծողի մոբիլ դպրոց. անհատի կրթական պատվեր**

| | | | |
|---|-------------------------------------|---------|-----|
| ե) ֆորմատ | + | | |
| ը) էսքիզ | + | | |
| թ) կամպանովկա | | | |
| 4. Պլաստիկ անատոմիա | | | |
| ա) ոսկրաբանություն | | | |
| բ) մկանաբանություն <small>Բովանդակություն</small> | Ուսման փուլեր | | + |
| Առաջադրանքներ | Հիմնական կրթական հենքով + | | |
| Նյութեր, տեխնիկաներ | I + | II + | III |
| 1. Տարբեր մակերեսներեվ, խտությամբ եւ տոնայնությամբ թղթեր | + | + | |
| 2. Գրաֆիտ, սեպիա, ածուխ, սան•ինա եւ այլն | | + | |
| 3. Ֆիքսատիվներ | | | |
| 4. Խառը տեխնիկա | | | |
| 5. Հաջորդականությունը առաջադրանքների կատարման ընթացքում | + | | |

**«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր
Ստեղծողի մոբիլ դպրոց. անհատի կրթական պատվեր**

| | | | |
|---|---|---|---|
| 1. Նատյուրմորտներ (պարզ, միջին բարդության, բարդ) | | | |
| ա) երկրաչափական մարմիններով | | | |
| բ) երկրաչափական մարմինների նման կենցաղային առարկաներով | | | |
| գ) տարբեր ձևեր, տոներ եւ նյութականություն ունեցող առարկաներով | + | | |
| դ) նատյուրմորտ ինտերյերում | + | | + |
| | | + | |
| 2. Բարելյեֆներ (պարզ, միջին բարդության, բարդ) | | | + |
| 3. Մարմնի մասեր (գիպս) | + | | |
| | | | + |
| 4. Գլուխ՝ | | + | |
| ա) գանգ | | + | |
| բ) էկորշե ծավալային | | | + |
| գ) էկորշե մկանային | | | |
| դ) գուլպգիպսից | | | + |
| ե) գլուխ բնորդից | | | + |
| | + | | + |
| 5.Ճեպանկար | | | |
| 6.Պատճեններ վարպետներից | | | + |
| 7.Լուսանկարների օգտագործում գծանկարչական աշխատանքներում | | + | + |